այլ ինչ ևս մասն (Սոփ. Հայկ. Զ.)։» Այս տեղից երևում է, որ Զենոն Հայերի ձեռը թողել է այն, ինչ որ ինքն իսկապէս չէր կարող տալ, որովհետև նոցա ձեռքումն էր. «վասն լուսաւորելոյն յառաջագոյն զնոսա» վերաբերում է Ս. Աջին, որ արդէն յայտնի մասունք էր Ե. դարում և ամէն ժամանակ իբրև մի պատուական սրբութիւն դուրս էր բերում ս. խաչի նշանի հետ միասին ժողովուրդ օրհնելու համար։ Հայրապետական աթոռի յաճախակի տեղափոխութիւնների ժամանակ Ս. Աջն էլ իւր տեղը փոխում էր։ Բագրատունեաց թագաւորութեան անկման և Սելջուքեան հրոսակների պատճառած շփոթութիւնների և գաղթականութիւնների ժամանակ Ս. Աջը գտնւում էր Աղթամար, ուր տարուել էր մի քանի այլ ս. նշանների հետ, ինչպէս երևում է, դեռ Ժ. դարի վերջերում։ Այդ մասին հաւաստի տեղեկութիւններ պակասում են։ Յայտնի է այն, որ Դրասխանակերտցի Յովհաննէս Զ. Կաթուղիկոսը, առ հասարակ շատ նեղուած լինելովներքին և արտաքին թշնամիներից, երբ 923թուին Դուինի կաթուղիկոսարանն ընկաւ Նբսր ոստիկանի ձեռքը, հեռացաւ գնաց Վասպուրական, ուր մի տարի յետոյ վախճանուեցաւ։ Այնուհետև նորա երեք յաջորդներն՝ Ստեփաննոս Բ., Թէոդորոս Ա. և Եղիշէ Ա. կաթուղիկոսներն Հայրապետութեան աթոռատեղի ընտրեցին Աղթամար կղզին, ուր և աթոռը մնաց